



Աջակցություն Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ  
ծրագրի միջոցով

**AM09/ENP-PCA/TP/04**

**ՏՀՏ-ի օգտագործումը Հայաստանի կազմակերպություններում ու  
պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում**

**Փորձնական հետազոտության զեկույց**

**Երևան  
2012 թ. նոյեմբերի 15**



ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն



# ՏՀՏ օգտագործումը Հայաստանի կազմակերպություններում ու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում

## Փորձնական հետազոտության զեկույց

Երևան  
2012 թ. նոյեմբերի 15

Գ. Անանյան  
*Վիճակագրական պետական  
խորհրդի անդամ  
ՇԵ Բաղադրիչի ղեկավար*

Ա. Հարությունյան  
*Առևտրի և այլ ծառայությունների  
վիճակագրության  
բաժնի պետ*

Հեռ՝ (37410) 58-76-23  
Ֆաքս՝ (37410) 52-19-21  
Էլ-փոստ՝ [armstat@sci.am](mailto:armstat@sci.am)  
Վեբ կայք՝ <http://www.armstat.am>

# Բովանդակություն

Բաժին	Անվանում	
<b>1.</b>	<b>Նախադրյալներ</b>	<b>4</b>
1.1	Ներածություն	4
1.2	Թվինինգ ծրագիրը և ՏՀՏ վիճակագրության վերաբերյալ Եմ կանոնակարգերը	5
1.3	Հայաստանում ՏՀՏ օգտագործման վերաբերյալ փորձնական հետազոտության նպատակը	5
<b>2.</b>	<b>Մեթոդաբանությունը</b>	<b>6</b>
2.1	Համակցությունը և ընտրանքը	6
2.2	Հարցաթերթերի ընդհանուր նկարագրությունը	8
2.3	Տվյալների հավաքագրման մեթոդները	9
<b>3.</b>	<b>Փորձնական հետազոտությունների եզրահանգումները</b>	<b>10</b>
3.1	Ընդհանուր աշխատանքային ծրագիրը	10
3.2	Վիճակագրական տեղեկատվության տրամադրողների՝ ռեսպոնդենտների հետ հետադարձ կապը և որոշ հարցերի չպատասխանելու պատճառները	10
<b>4.</b>	<b>&lt;&lt;ՏՀՏ օգտագործումը Հայաստանում&gt;&gt; փորձնական հետազոտության արդյունքները</b>	<b>13</b>
4.1	Կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման փորձնական հետազոտության արդյունքները	13
4.2	ՏՀՏ օգտագործումը նախարարություններում	22
<b>5.</b>	<b>Փորձնական հետազոտությունից անցում կանոնավոր հետազոտության</b>	<b>25</b>
5.1	Վիճակագրական արտադրանք	25
5.2	Հետազոտության ծածկույթը և դասակարգումը	25
5.3	Տվյալների հավաքագրման մեթոդը	26
5.4	Հետազոտության հարցաթերթերը	26
5.5	Շերտավորումը և ընտրանքի չափը	27
5.6	Կշռման արդյունքները	29
5.7	Փաստաթղթավորում և տարածում	29
Հավելված 1	10 կամ ավելի աշխատող ունեցող կազմակերպությունները քաղաք Երևանում (2010), ըստ տնտեսական գործունեության տեսակների	30
Հավելված 2	ՏՀՏ օգտագործման փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպություններն ըստ գործունեության տեսակների և աշխատողների թվաքանակով որոշվող չափերի	30
Հավելված 3	2012 թ. կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման 1-ՏՀՏ հարցաթերթ	31
Հավելված 4	2012 թ. Պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում ՏՀՏ օգտագործման 2-ՏՀՏ հարցաթերթ	37
Հավելված 5	Մեթոդաբանական -տերմինաբանական բառարան 1-ՏՀՏ և 2-ՏՀՏ հարցաթերթերի համար	40
Հավելված 6	1-ՏՀՏ հարցաթերթի որակի գնահատման աղյուսակ	49
Հավելված 7	2-ՏՀՏ հարցաթերթի որակի գնահատման աղյուսակ (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ)	57

# 1. Նախադրյալներ

## 1.1 Ներածություն

Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացումն ու տեղեկատվական հանրության կայացումը կարևորագույն խթան են հանդիսանում աշխարհի բոլոր զարգացած երկրների տնտեսության մրցունակության և արդյունավետության բարձրացման համար:

ՏՀՏ ոլորտը հանդիսանում է Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտներից մեկը: Հայաստանում ՏՀՏ ոլորտը առաջատար դիրք է գրավում տեխնոլոգիական նորամուծությունների, օտարերկրյա ներդրումների, որակյալ աշխատուժի առկայության բնագավառներում: Հարուստ գիտակրթական ավանդույթները և բարձրակարգ կադրերն օգնեցին Հայաստանին ներգրավել տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ոլորտի համաշխարհային բազմաթիվ ընկերություններ:

2000թ.-ից ի վեր տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտը ՀՀ կառավարության կողմից ճանաչվել է երկրի տնտեսական առաջընթացի կարևորագույն բաղադրիչներից մեկը, որի մասին են վկայում վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից ընդունված ՏՏ ոլորտի զարգացման բազմակողմանի ռազմավարությունները, որոնք ուղղված են խթանելու ՏՀՏ ոլորտի առաջանցիկ աճը:

Ներկայումս, կարևոր է նաև ունենալ ՏՀՏ ոլորտի վիճակագրություն ոչ միայն առաջարկի մոտեցմամբ, այլ նաև ունենալ Հայաստանի կազմակերպությունների և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՏՀՏ-ի օգտագործման մասին տեղեկատվություն: Այսպիսով, անհրաժեշտ է մեթոդաբանական զարգացումների ապահովումը գործող միջազգային չափանիշներին և մոտեցումներին, հետազոտական գործիքների լայն օգտագործումը, որը հնարավորություն կտա ամբողջականացնել ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը և կնպաստի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսավարող սուբյեկտների, հանրության կողմից ՏՀՏ օգտագործման գնահատմանը:

Նշված խնդիրների լուծմանն է ուղղված Եվրոպական Միության (ԵՄ) ԹՎինինգ Ծրագրի <<Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը>> պայմանագրի <<Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն>> (ՏՀՏ) Բաղադրիչը, որի շրջանակում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվում է ՏՀՏ օգտագործման վերաբերյալ նոր հետազոտություն: Սույն զեկույցի մեջ ներկայացված են այդ փորձական հետազոտության արդյունքները:

## 1.2 ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐԸ և ՏՀՏ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՄ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ

2011 թվականի հունվարից Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում մեկնարկել է «Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը» երկամյա պայմանագիրը: Խնդրո առարկա պայմանագրի «Բաղադրիչ Զ. Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» (ՏՀՏ) շրջանակում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվել են փորձնական հետազոտություններ, որոնց նպատակն է նախապատրաստվել կազմակերպություններում և պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում ՏՀՏ օգտագործման ամբողջական հետազոտությանը: Այսպիսով, ՏՀՏ օգտագործման վիճակագրությունը ամբողջովին համադրելի կլինի միջազգային չափորոշիչներին:

Նշված նպատակի իրագործման համատեքստում, Եվրոմիության անդամ երկրներում կիրառվող նույնաբովանդակ հարցաթերթի հիման վրա ՀՀ ԱՎԾ կողմից մշակվել է «Կազմակերպություններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման և էլեկտրոնային առևտրի մասին» Ձև 1-ՏՀՏ, «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման մասին» Ձև 2-ՏՀՏ վիճակագրական դիտարկման հարցաթերթերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները, որոնք հաստատվել են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի հունվարի 27-ի թիվ 02-Ա որոշմամբ:

ՏՀՏ հետազոտությունների ԵՄ կառուցվածքը սահմանված է համապատասխան օրենսդրությամբ և մի շարք այլ իրավական ակտերով, որոնցից ամենակարևորները ներկայացված են ստորև՝

- Տեղեկատվական հանրության վիճակագրության կառուցվածքային կանոնակարգ (կանոնակարգ 808/2004, ինչպես նաև 1006/2009 կանոնակարգը, որը լրացումն է 808/2004 կանոնակարգը),
- ԵՄ տարեկան մոդել հարցաշարը, որը ընդգրկում է համապատասխան հետազոտության իրականացման կանոնակարգը՝ 2013 թվականի տվյալների հավաքագրման համար,
- Մեթոդաբանական ձեռնարկ տարեկան:

## 1.3 Հայաստանում ՏՀՏ օգտագործման վերաբերյալ փորձնական հետազոտության նպատակը

ՏՀՏ օգտագործման վերաբերյալ փորձնական հետազոտության իրականացման նպատակներն են՝

- ՏՀՏ օգտագործման վիճակագրության ԵՄ մեթոդաբանության փորձարկումը,
- ՏՀՏ օգտագործման վերաբերյալ վիճակագրության ձևավորումը ԵՄ մեթոդաբանության պահանջներին համապատասխան,
- Հարցաթերթերի և մեթոդաբանական ցուցումների դաշտային փորձարկումը՝ հետազոտում տնտեսավարող սուբյեկտներում և պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում նմանատիպ հետազոտությունների իրականացման համար,
- ԵՄ վիճակագրությանը համադրելի ՏՀՏ օգտագործման վերաբերյալ վիճակագրության արտադրանքի ստացումը,

- Միջազգային հարցաշարերի՝ ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանսի, Եվրոպական Հանձնաժողովի պահանջներին համապատասխան անհրաժեշտ ցուցանիշների համակարգի ձևավորումը:

## 2. Մեթոդաբանությունը

### 2.1 Համակցությունը և ընտրանքը

ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2012թ. իրականացված SՀS օգտագործման փորձնական հետազոտության թիրախային համակցությունը կազմակերպություններն են և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները:

Ընտրանքը կատարվել է համաձայն <<Կազմակերպություններում SՀS օգտագործման>> հետազոտության իրականացման 2011թ. Եվրոստատի մեթոդաբանության:

Կազմակերպություններում SՀS օգտագործման փորձնական հետազոտության մեջ ընդգրկվել են 10 և ավելի աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպությունները ըստ տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (SԳՏՀԴ խմբ.2) չորս ոլորտների՝ արդյունաբերություն, շինարարություն, առևտուր և այլ ծառայություններ: Հարկ է նշել, որ ամբողջական հետազոտության իրականացման դեպքում կընդգրկվեն 12 ոլորտ: Ոլորտները բերված են ստորև աղյուսակում.

**Նկարագիր աղյուսակ՝ Ապագա հետազոտության և փորձնական հետազոտության ոլորտի խմբավորումներ (ըստ SՉՏԴ խմբ. 2)**

NACE դասակարգումը ամբողջական հետազոտության համար	Փորձնական հետազոտություն	
1 C Մշակող արդյունաբերություն	Արդյունաբերություն	
2 D Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում		
3 E Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում		
4 F Շինարարություն	Շինարարություն	
5 G Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	Առևտուր	
6 H Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	Այլ ծառայություններ	
7 I Կացության և հանրային սննդի կազմակերպում		
8 J Տեղեկատվություն և կապ		
9 L Անշարժ գույքի հետ կապված գործունեություն		
10 M Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն>> (խումբ՝ 69-74), բացառությամբ <<Անասնաբուժական գործունեություն>> հատվածը		
11 N Վարչարարական և օժանդակ գործունեություն		
12 S Սպասարկման այլ ծառայություններ>> բաժնից՝ միայն 95.1 խումբը՝ <<Համակարգիչների և կապի սարքավորանքի նորոգում >> խումբը		

Կազմակերպություններում SՀՏ օգտագործման փորձնական հետազոտության ընտրանքի համար հիմք է հանդիսացել ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի տվյալների բազան: Ընտրանքը կատարվել է քաղաք Երևանի վերոհիշյալ ոլորտների 1909 տնտեսավարող սուբյեկտներից, որոնք հանդիսանում են ընտրանքի գլխավոր համակցությունը: Ընտրանքը կազմել էր 100 միավոր: Ընտրանքային համակցությունը ստանալու համար կատարվել է ընտրանքի գլխավոր համակցության շերտավորում ըստ միավորների գլխավոր գործունեության տեսակների վերոհիշյալ ոլորտների և աշխատողների թվաքանակի հետևյալ խմբավորումներով՝

- 10-ից 30 աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ,
- 31-ից 50 աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ,
- 51-ից 100 աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ,
- 101 և ավելի աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ:

Աշխատողների թվաքանակով նման բաշխվածությունն իրականացվել է ՀՀ ԱՎԾ –ում կիրառվող աշխատողների խմբավորումներին համապատասխան:

Հետագայում, ամբողջական հետազոտության իրականացման համար, կօգտագործվի Եվրոպական ստանդարտներին համաձայն աշխատողների թվաքանակով բաշխվածությունը հետևյալ խմբավորումներով՝

- 10-ից 29 աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ,
- 30-ից 49 աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ,
- 50-ից 99 աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ,
- 100-249 աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ,
- 250 և ավելի աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպություններ:

Փորձնական ընտրանքային հետազոտության համապատասխան շերտավորումից հետո ստացվել են 48 քանակով շերտեր (12 ոլորտի խմբեր և 4 չափի խմբեր), որոնցով ընտրանքի որոշված չափը բաշխելու համար օգտագործվել է հավասարաչափ բաշխման եղանակը: Խմբավորելով կազմակերպությունների տնտեսական գործունեության տեսակները ըստ չորս ոլորտների և ունենալով աշխատողների թվաքանակով կազմակերպությունների բաշխվածության չորս խմբեր, արդյունքում ստացվել է ընտրանք 16 շերտավորմամբ (ներկայացած են հավելվածներ 1-ում և 2 –ում):

Պետական մարմիններում ՏՀՏ օգտագործման փորձնական հետազոտության թիրախային համակցությունը սահմանելու գործընթացում հաշվի առնելով դրանցում խնդրո առարկա հետազոտության ամբողջականության ապահովման նկատառումները ուսումնասիրվել են միայն նախարարությունները, որոնց քանակը կազմել է 17 միավոր (18-ից):

## **2.2 Հարցաթերթերի ընդհանուր նկարագրությունը (ներկայացված են հավելվածներում)**

ՀՀ ԱՎԾ-ի կողմից ՏՀՏ օգտագործման հետազոտության անցկացման համար կազմվել է երկու հարցաթերթ: Կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման հետազոտության համար կազմվել է Ձև 1-ՏՀՏ (տարեկան) <<Կազմակերպություններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման և էլեկտրոնային առևտրի մասին>> հարցաթերթը, որը համապատասխանում է ԵՄ չափանիշներին և համարժեք ԵՄ 2011թ. հարցաշարին: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ՏՀՏ օգտագործման հետազոտության համար կազմվել է Ձև 2-ՏՀՏ (տարեկան) <<Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման>> հարցաթերթը, որը նույնպես համապատասխանում է որոշ ԵՄ երկրների փորձառությանը, չնայած նրան, որ ԵՄ–ը չի սահմանում պարտադիր պահանջ հանրային



հատվածում նմանատիպ հետազոտությունների իրականացման: Հարցաթերթերի լրացման համար կազմվել է <<Հարցաթերթերի լրացման մեթոդական ցուցումներ>>-ը, որը սահմանում է հարցաթերթերում ներառված ՏՀՏ սահմանումների պարզաբանումները:

ՏՀՏ օգտագործման հարցաթերթերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատվել են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (ՀՀ ՎՊԽ ) 2012թ. հունվարի 27-ի թիվ 02-Ա որոշմամբ (ներկայացած են հավելվածներ 3 –ից 5-ում):

Սույն հարցաթերթերը կազմվել են հիմնվելով ԵՄ փորձագետների, Դանիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունների փորձագետների առաջարկությունների, ինչպես նաև ծրագրի արտաքին շահառուների՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՀՀ << Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ>>-ի համապատասխան փորձագետների կողմից կատարված դիտողությունների հիման վրա:

### **2.3 Տվյալների հավաքագրման մեթոդները**

Համաձայն ՏՀՏ օգտագործման հետազոտության միջազգային մեթոդաբանության, տվյալների հավաքագրման գործընթացի համար ընդունելի են հետևյալ տարբերակները.

- Տվյալների հավաքագրումը հարցազրուցավարների միջոցով,
- Տվյալների հավաքագրումը փոստի միջոցով,
- Տվյալների հավաքագրումը էլեկտրոնային եղանակով:

Անհատական հարցազրուցավարների միջոցով տվյալների հավաքագրման գործընթացի կազմակերպումը ունի որոշակի առավելություններ փոստի միջոցով իրականացվող հետազոտության համեմատությամբ, քանի որ հետազոտության բարդությունից և առանձնահատկություններից ելնելով, այն տեղեկատվություն տրամադրողների հետ անմիջական շփման արդյունքում ապահովում է հավաքագրվող պատասխանների հնարավոր բարձր որակ: Ընդ որում, այս տարբերակով հետազոտության անցկացումը բավականին ծախսատար է: Սակայն, հաշվի առնելով ռեսուրսների բացակայությունը, որոշվեց իրականացնել փորձնական հետազոտություն, տվյալների հավաքագրման գործընթացը փոստի միջոցով: Հավաքագրվող տվյալների որակի ապահովման նպատակով տեղեկատվություն տրամադրողների հետ ՀՀ ԱՎԾ-ն հեռախոսազանգերի միջոցով իրականացրել է անհրաժեշտ ճշգրտումներ:

### 3. Փորձնական հետազոտությունների եզրահանգումները

#### 3.1 Ընդհանուր աշխատանքային ծրագիրը

ՀՀ ԱՎԾ-ի կողմից ՏՀՏ օգտագործման փորձնական հետազոտությունը իրականացվել է 2012թ. փետրվար-մարտ ամիսներին: Հետազոտությունն իրականացվել է փուտի միջոցով, ինչը համապատասխանում է Եվրամիության երկրների մեծ մասում նմանատիպ հետազոտությունների իրականացման գործիքին: Հարցաթերթերը ուղարկվել են 2012թ. փետրվար ամսին, իսկ լրացված հարցաթերթերը ստացվել են մարտ ամսին: Տվյալների մուտքագրման և գրանցման համար կազմվել են մուտքագրման երկու ծրագիր (<<Access>> բազայով)՝ ՀՀ ԱՎԾ տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի օժանդակությամբ:

Մինչև մուտքագրման աշխատանքների իրականացումը հարցաթերթերը ենթարկվել են տրամաբանական ստուգման: Տվյալների մուտքագրումը ավարտվել է 2012թ. ապրիլին և տվյալների վերլուծության գործընթացը սկսվել է 2012թ մայիսին:

#### 3.2 Վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների՝ ռեսպոնդենտների հետ հետադարձ կապը և որոշ հարցերի չպատասխանելու պատճառները

Հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների և ՀՀ նախարարությունների կողմից մասնակցությունը կազմել է 100 տոկոս: Հետազոտության տվյալների մուտքագրման աշխատանքների ավարտից հետո, նախ, կազմվել են հարցաթերթերի լրացման հետ կապված որակական գնահատականների աղյուսակներ, որոնք խնդրո առարկա հետազոտությունների համար, նախ և առաջ, վերաբերվում են հարցաթերթերում ընդգրկված յուրաքանչյուր ցուցանիշի վերաբերյալ ստացված

- Այո,
- Ոչ,
- Չկա պատասխան
- Շրջանակից դուրս<sup>1</sup>

պատասխաններին՝ ըստ կազմակերպությունների (ուրբտներով և աշխատողների թվաքանակով որոշվող խմբերով) և ըստ ՀՀ նախարարությունների, որոնք վկայում են հետազոտության դրական արդյունքների մասին (հավելվածներ 6 և 7):

ՏՀՏ օգտագործման հետազոտության մեջ ընդգրկված որոշ կազմակերպությունների և ՀՀ նախարարությունների կողմից ներկայացված հարցաթերթերում առկա էին սխալներ՝ տրամաբանական և մեթոդաբանական տեսանկյունից, որոնց ձգգրտման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՀ ԱՎԾ

<sup>1</sup> Ֆիլտր հարցերին <<Ոչ>> պատասխաններ տալու արդյունքում անհրաժեշտ է բաց թողնել հարցը:

առևտրի և այլ ծառայությունների բաժնի աշխատողները հետադարձ կապ էին հաստատել ռեսպոնդենտների հետ՝ այցելությունների, խորհրդակցությունների, հեռախոսազանգերով պարզաբանումների միջոցով:

Հետադարձ կապի հաստատման արդյունքում պարզաբանումներ են տրվել հետևյալ խնդիրների վերաբերյալ՝ մասնավորապես.

1. Քանի որ, մինչ այժմ ՏՀՏ օգտագործման մասին հետազոտություն չէր իրականացվել, այդ իսկ պաճառով որոշակի դժվարություններ էին առաջացել ռեսպոնդենտների մոտ, ընդհանրապես, հարցաթերթի լրացման աշխատանքներում, կապված մասնագիտական պատրաստվածության և իրազեկվածության հետ,
2. Հարցաթերթերի մի մասը երբեմն հանձնարարվել էր լրացնել այնպիսի մասնագետների, որոնք աշխատանքային առումով առնչություն չէին ունեցել ՏՀՏ օգտագործման ոլորտի ցուցանիշների հաշվառման հետ,
3. Հարցաթերթում ներառված որոշ հիմնական հարցերին սխալմամբ տրվել էր <<Ոչ>> պատասխան, այն դեպքում երբ նույն հարցի համապատասխան ենթահարցերին տրվել էին << Այո>> պատասխաններ,
4. Կազմակերպությունների մի մասը դժգոհություն էր հայտնել այն մասին, որ բավականին ժամանակատար և աշխատատար է նման ծավալուն հարցաթերթ լրացնելը և այլն:
5. Այլ մեթոդաբանական հիմնախնդիրներ, օրինակ.

5.1 Հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների և նախարարությունների մի մասը ըստ հարցաթերթերի նշել էին համակարգիչ օգտագործող աշխատողների ավելի մեծ թվաքանակ, քան նրանց կողմից նշված նույն հարցաթերթերի <<Աշխատողների միջին տարեկան թվաքանակը>>-ն էր:

5.2 Ինտերնետ հասանելիություն ունեցող կազմակերպությունների և նախարարությունների մի մասը նշել էր ինտերնետին արտաքին միացման տեսակը՝ DSL (xDSL, ADSL, SDSL, VDSL և այլն) –ը, իսկ Ինտերնետի ամենաարագ ներբեռնման արագությունը՝ 100.1 Մբ/վ և ավել, այն դեպքում երբ ինտերնետի արտաքին միացման DSL տեսակին համապատասխանում է մաքսիմումը՝ 25 Մբ/վ ներբեռնման արագությունը, VDSL տեսակին՝ մաքսիմումը՝ 50 Մբ/վ ներբեռնման արագությունը, կամ նշվել էր ISDN կապի տեսակը և 2.1Մբ/վ-ից 10.0Մբ/վ ներբեռնման արագությունը , այն դեպքում երբ այդ կապի տեսակին համապատասխանում է մինչև 2.0 Մբ/վ ներբեռնման արագությունը:

5.3 Հարցաթերթը լրացնողների մոտ դժվարություններ էին առաջացել հարցաթերթի Մոդուլ Զ-ի <<Ձեր կազմակերպությունը ստացել է ապրանքների և ծառայությունների պատվերներ կայք էջի միջոցով>> և <<Ձեր կազմակերպությունը ստացել է ապրանքների և ծառայությունների պատվերներ EDI տեսակի հաղորդագրությունների միջոցով>> հարցերին պատասխանելիս, քանի որ նրանք չէին կարողացել հասկանալ այդ երկու հարցերի բովանդակությունը:

5.4 Հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների մի մասը Սոդուլ Դ-ի «Ձեր կազմակերպությունը ուղարկել է էլեկտրոնային հաշիվներ» հարցին տվել էին «այո» պատասխան, սակայն գործնականում դժվարացել էին տարանջատել թե ուղարկած էլեկտրոնային հաշիվները «հարմա՞ր են» կամ «համա՞ր չեն» ավտոմատ մշակման համար:

5.5 Որոշ կազմակերպություններ ինտերնետի միացման տեսակներից նշել էին նվազագույնը 3G տեխնոլոգիայով շարժական լայնաշերտ կապը, բայց ցույց չէին տվել այդ կապի հասանելիություն ունեցող աշխատողների թվաքանակը, կամ ընդհակառակը՝ հարցաթերթում նշել էին նվազագույնը 3G տեխնոլոգիայով ինտերնետի մուտքի հասանելիություն ունեցող աշխատողների թվաքանակը, բայց չէին նշել նվազագույնը 3G տեխնոլոգիայով ինտերնետի միացման տեսակը:

5.6 Որոշ կազմակերպություններ ինտերնետ հասանելիություն ունեցող աշխատողների թվաքանակն ավելի քիչ էին ցույց տվել, քան դյուրակիր սարքավորմամբ նվազագույնը 3G տեխնոլոգիայով ինտերնետ մուտք գործած աշխատողները: Իրականում, նվազագույնը 3G տեխնոլոգիայով ինտերնետ մուտք գործած աշխատողների թվաքանակը պետք է փոքր կամ հավասար լիներ ինտերնետ հասանելիություն ունեցող աշխատողների թվաքանակից:

5.7 Կազմակերպությունների մի մասի կողմից դժգոհություն էր հայտնվել *«Աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող աշխատողների միջին տարեկան թվաքանակը»* և *«Հասույթը (առանց ԱԱՀ)»* հարցերին պատասխանելիս, մեկնաբանելով որ այդ ցուցանիշները նրանց կողմից արդեն տրամադրել էին ՀՀ ԱՎԾ համապատասխան վիճակագրական հաշվետվություններով, ինչպես նաև բիզնես ռեգիստրի տարեկան հարցաթերթով:

#### 4. << S2S օգտագործումը Հայաստանում >> փորձնական հետազոտության արդյունքները

Սույն բաժնում ներկայացված վերլուծությունը կատարվել է կազմակերպություններում և հաստատություններում (տեղական ինքնակառավարման մարմիններում) իրականացված S2S օգտագործման մասին փորձնական հետազոտության արդյունքներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրականացվել է փորձնական հետազոտություն կազմակերպությունների համեմատաբար փոքր ընտրանքով, ապա հարկ է շեշտել, որ ներկայացված արդյունքները և վերլուծությունը կարող են ծառայել միայն որպես ապագա ամբողջական հետազոտության հրապարակման օրինակ: Սույն գեկույցի մեջ ներառված արդյունքները խիստ անորոշ են և չպետք է օգտագործվեն որևէ այլ նպատակներով:


##### 4.1 Կազմակերպություններում S2S օգտագործման փորձնական հետազոտության արդյունքները

Կազմակերպություններում S2S օգտագործման փորձնական հետազոտության արդյունքներով, 2012թ. հունվարին 10 և ավելի աշխատողներ ունեցող 4 ոլորտների՝ արդյունաբերության, շինարարության, առևտրի և այլ ծառայությունների կազմակերպությունների 92%-ը օգտագործել են համակարգիչ, իսկ ներքին համակարգչային ցանց՝ 73%-ը (տե՛ս գծապատկեր 1):

Հետազոտության մեջ ընդգրկված շինարարության և առևտրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նույնպես օգտագործել են համակարգիչներ, որը բնորոշ է նաև 101 և ավելի աշխատողներ ունեցող կազմակերպություններին:

Ներքին համակարգչային ցանցի օգտագործումը գերակշռում է առևտրի ոլորտի կազմակերպություններում՝ 92%, իսկ արդյունաբերության և այլ ծառայությունների ոլորտներում այն կազմում է 72%: 101 և ավելի աշխատողներ ունեցող կազմակերպություններում այդ ցուցանիշը կազմել է 90%:

**Գծապատկեր 1 Համակարգիչներ և ներքին համակարգչային ցանց օգտագործած կազմակերպությունների բաշխվածությունը 2012թ. հունվարին**




2012թ. հունվարին փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների աշխատողների 24%-ը օգտագործել է համակարգիչ (տե՛ս գծապատկեր 2): Առևտրի ոլորտում այդ ցուցանիշը ամենաբարձրն է՝ և կազմում է 34%:

Հատկանշական է, որ ցուցանիշը ավելի բարձր է 10-30 աշխատողներ ունեցող կազմակերպություններում, որոնցում աշխատողների 36% օգտագործում է համակարգիչ, մինչդեռ 101 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում այն կազմել է 25%:

**Գծապատկեր 2 Կազմակերպություններում համակարգիչ օգտագործող աշխատողների թվաքանակի բաշխվածությունը 2012թ. հունվարին**

%-ով ընդամենի նկատմամբ



Փորձնական հետազոտության մեջ ներառված կազմակերպությունների գերակշռող մասը՝ 89%-ը, 2012թ. հունվարին ունեցել է ինտերնետ կապ: Առևտրի և շինարարության ոլորտի բոլոր կազմակերպություններն ունեցել են ինտերնետ կապի հասանելիություն: Նույնը բնորոշ է նաև 101 և ավելի աշխատողներ ունեցող կազմակերպություններին:

2012թ. հունվարին փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների աշխատողների 28 տոկոսը ունեցել է Ինտերնետ հասանելիություն:


2012թ. հունվարին կազմակերպությունները հիմնականում օգտագործել են այլ ֆիքսված և լայնաշերտ ինտերնետ կապ, համապատասխանաբար՝ 54 և 42%:

2012թ. հունվարին ինտերնետ հասանելիություն ունեցող կազմակերպությունների միայն 9% է օգտագործել ինտերնետին արտաքին միացման կապի տեսակներից ISDN (ինտեգրացված ծառայությունների թվային ցանց, որը հնարավորություն է տալիս մեկ բաժանորդային գծի միջոցով միաժամանակ մատուցել ձայնի և տվյալների հաղորդման ծառայություններ) կապը (տե՛ս գծապատկեր 3):

**Գծապատկեր 3**

**Կազմակերպությունների ինտերնետ կապի տեսակները<sup>2</sup> 2012թ. հունվարին**

%-ով ընդամենի նկատմամբ




2012թ. հունվարին ինտերնետ հասանելիություն ունեցող կազմակերպությունների 58%-ը ունեցել է կայք `գլխավոր էջ: Ցուցանիշը բարձր է առևտրի և այլ ծառայությունների ոլորտներում` համապատասխանաբար 84 և 69%: Կազմակերպությունների աշխատողների թվաքանակով որոշվող խմբերում ամենացածր մասնաբաժինը` (45%) 31-50 խմբում է, իսկ ամենաբարձրը` (68%) 51-100 խմբում (տե՛ս գծապատկեր 4):

**Գծապատկեր 4**

**Կայք էջ ունեցող կազմակերպությունների բաշխվածությունը 2012թ. հունվարին**

%-ով ընդամենի նկատմամբ



<sup>2</sup> Ըստ տեսակների ինտերնետ կապի բաշխվածության հանրագումարը 100 տոկոս չի կազմում, քանի որ միևնույն կազմակերպությունը օգտագործել է մեկից ավելի ինտերնետին արտաքին միացման տեսակներ:

2012թ. հունվարին կազմակերպությունների՝ ըստ կայք էջի ունեցած ծառայությունների բաշխվածության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց 35%-ի կայքը ունեցել է ապրանքների կատալոգ կամ գնացուցակ, 8%-ը՝ այցելուների համար ապրանքների փոփոխման, կամ նախագծման հնարավորություն:

Ըստ ոլորտների ցուցանիշի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունաբերության ոլորտի կայք էջ ունեցող բոլոր կազմակերպություններն ունեցել են ապրանքների կատալոգ և գնացուցակ: Ընդ որում, կայք էջի այդ ծառայության տեսակը ունեցել է նաև 31-50 աշխատողների թվաքանակ ունեցող յուրաքանչյուր երկրորդ կազմակերպություն:


2012թ. հունվարին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շփման նպատակով ինտերնետ օգտագործած կազմակերպությունների մասնաբաժինը (ինտերնետ հասանելիություն ունեցող կազմակերպությունների նկատմամբ) կազմել է 92%:

Թե՛ ըստ ոլորտների և թե՛ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող խմբերում ցուցանիշը բարձր է 85%-ից (տե՛ս գծապատկեր 5):

**Գծապատկեր 5**

**Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շփման նպատակով ինտերնետ օգտագործած կազմակերպությունների բաշխվածությունը 2012թ. հունվարին**

%-ով ընդամենի նկատմամբ




2012թ. հունվարին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շփման համար կազմակերպությունների 89%-ը ինտերնետը օգտագործել է էլեկտրոնային եղանակով լրացված հաշվետվության ձևերը ներկայացնելու նպատակով, իսկ կազմակերպությունների ոչ պակաս մասնաբաժինը 84 %-ը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կայք էջից կամ գլխավոր էջից հաշվետվական ձևերը ստանալու նպատակով (տե՛ս գծապատկեր 6):



**Գծապատկեր 6**

**Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շփման համար ինտերնետ օգտագործած կազմակերպությունների բաշխվածությունը<sup>3</sup> 2012թ. հունվարին**

%-ով ընդամենի նկատմամբ



2012թ. հունվարին կազմակերպությունների մոտ 30%-ը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շփումը սահմանափակող պատճառ են համարել ինչպես տվյալների գաղտնիությանն ու անվտանգությանն առնչվող հարցերը, այնպես էլ էլեկտրոնային ընթացակարգերի առկայության մասին տեղյակ չլինելը:

2011թ. փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների 19 տոկոսը օգտագործել են էլ-գնումների համակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների էլեկտրոնային գնումների համակարգում ապրանքներ և ծառայություններ առաջարկելու համար: Կազմակերպությունների 18 տոկոսը օգտագործել է Ինտերնետը էլեկտրոնային տենդերի համար (սա էլ-գնումների գործընթաց է, որն առնչվում է տենդերների կամ առաջարկների առցանց ներկայացման հետ): Կազմակերպությունների 15 տոկոսը օգտագործել է Ինտերնետը Հայաստանում էլ-տենդերին մասնակցելու համար, մինչդեռ փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների 5 տոկոսը օգտագործել են Ինտերնետը այլ երկրներում էլ-տենդերին մասնակցելու համար:


2011թ. փորձնական հետազոտության մեջ ներառված ինտերնետ հասանելիություն ունեցող կազմակերպությունների 74%-ը օգտագործել է էլեկտրոնային ստորագրություն, օրինակ՝ օգտագործելով գաղտնի կոդերի մեթոդները, որոնք հավաստիացնում են հաղորդագրության իսկությունը և ամբողջականությունը՝ եզակիորեն փոխկապակցված և ստորագրողին նույնականացնելու հնարավորությամբ, ինչպես նաև հաղորդագրության մեջ հետագա փոփոխության բացահայտման հնարավորությամբ: Արդյունաբերության և շինարարության ոլորտներում ցուցանիշը նույնն է՝ 67%, իսկ առևտրի և այլ ծառայությունների ոլորտում՝ 77 % (տե՛ս գծապատկեր 7):

<sup>3</sup> Կազմակերպությունների բաշխվածության հանրագումարը 100 տոկոս չի կազմում, քանի որ միևնույն կազմակերպությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ շփում կարող էր ունենալ մի քանի նպատակներով:

**Գծապատկեր 7**

Էլեկտրոնային ստորագրություն օգտագործած կազմակերպությունների բաշխվածությունը 2011թ.

%-ով ընդամենի նկատմամբ




Փորձնական հետազոտության մեջ ներառված կազմակերպություններից 69%-ը 2012թ. հունվարին ստացել է կամ ուղղարկել է ավտոմատ մշակման համար հարմար տեղեկատվություն, որի մասնաբաժինը համակարգիչ օգտագործող կազմակերպությունների ընդհանուր քանակում կազմել է 75 %: Ըստ ոլորտների ցուցանիշի էական տատանումներ չի արձանագրվել՝ 73-77%%, նույն միտումը չի նկատվում աշխատողների թվաքանակով որոշվող խմբերում, որտեղ 101 և ավելի խմբի կազմակերպություններում այն ամենաբարձրն է՝ 85 % (տե՛ս գծապատկեր 8):

**Գծապատկեր 8**

Ավտոմատ մշակման համար հարմար էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն ստացած կամ ուղարկված կազմակերպությունների կառուցվածքն 2012թ. հունվարին

%-ով ընդամենի նկատմամբ




2012թ. հունվարին փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների 74%-ը ավտոմատ մշակման համար հարմար էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն ստացել կամ ուղարկել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին (տե՛ս գծապատկեր 9):

**Գծապատկեր 9**

**Ավտոմատ մշակման համար հարմար էլեկտրոնային եղանակով ըստ նպատակների տեղեկատվություն ստացած կամ ուղարկած կազմակերպությունների քանակի բաշխվածությունը <sup>4</sup> 2012թ. հունվարին**

%-ով ընդամենի նկատմամբ



Փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների 60%-ը 2012թ. հունվարին ուղարկել է էլեկտրոնային հաշիվներ թվային ձևաչափով ավտոմատ մշակման համար հարմար տեղեկատվություն, որի մասնաբաժինը համակարգիչ օգտագործող կազմակերպությունների ընդհանուր քանակում կազմել է 65 %-ը: Ընդ որում, էլեկտրոնային հաշիվներ ուղարկած կազմակերպություններից միայն 68%-ն է ուղարկել ստանդարտ կառուցվածքով ավտոմատ մշակման համար հարմար ձևաչափով հաշիվներ (օրինակ՝ EDI, UBL, XML և այլ ձևաչափերով):

Ավտոմատ մշակման համար հարմար ստանդարտ կառուցվածքով էլեկտրոնային հաշիվներ ստացած կազմակերպությունների քանակը կազմել է 54%:


Փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների 80% -ը 2012թ. հունվարին ստացել է վաճառքի հայտ, կամ ուղարկել գնման հայտ (էլեկտրոնային եղանակով կամ առցանց), բարձր ցուցանիշ է արձանագրվել այլ ծառայությունների ոլորտում 92 %, ինչպես նաև աշխատողների թվաքանակով որոշվող 31-50 ու 101 և ավելի խմբերում՝ 95% (տե՛ս գծապատկեր 10):

<sup>4</sup> Ավտոմատ մշակման համար հարմար էլեկտրոնային եղանակով ըստ նպատակների տեղեկատվություն ստացած կամ ուղարկած կազմակերպությունների քանակի բաշխվածության հանրագումարը 100 տոկոս չի կազմում, քանի որ յուրաքանչյուր կազմակերպություն տեղեկատվությունը կարող է ուղարկել կամ ստանալ մի քանի նպատակներով:

**Գծապատկեր 10**

**Վաճառքի հայտ ստացած և/կամ գնման հայտ ուղարկած (էլեկտրոնային եղանակով կամ առցանց) կազմակերպությունների բաշխվածությունը հունվարին**

**%-ով ընդամենի նկատմամբ**




Փորձնական հետազոտության մեջ ներառված համակարգիչ ունեցող կազմակերպությունների 17 տոկոսը 2011 թ. ստացել են ապրանքների կամ ծառայությունների հայտեր էլեկտրոնային եղանակով կամ առցանց (տե՛ս գծապատկեր 11): Կազմակերպությունների 11 տոկոսը ստացել են այսպիսի հայտեր Հայաստանի հաճախորդներից, մինչդեռ 7 տոկոսը ԱՊՀ երկրներից և փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների 9 տոկոսը հայտերը ստացել էին այլ երկրներից: Կայք էջի միջոցով ստացված պատվերների արդյունքում ստացված հասույթի մասնաբաժինը փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների հասույթում կազմել է 4%:

2011թ. EDI (էլեկտրոնային տվյալների փոխանակում հարմար ավտոմատ մշակման համար) տեսակի հաղորդագրությունների միջոցով ապրանքների և ծառայությունների պատվերներ ստացած փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների քանակը կազմել է ընդամենը 2 միավոր:

2011թ. փորձնական հետազոտության մեջ ընդգրկված կազմակերպությունների 10%-ը կայք էջի միջոցով ապրանքների կամ ծառայությունների պատվերներ է ներկայացրել: Միայն համակարգիչ ունեցող կազմակերպությունների վերլուծության դեպքում մասնաբաժինը կազմում է 11 % (տե՛ս գծապատկեր 11):

Գծապատկեր 11

Էլեկտրոնային առևտրի գործարքներ իրականացրած կազմակերպությունների բաշխվածությունը 2012թ. հունվարին  
%-ով ընդամենի նկատմամբ



## 4.2 S2S օգտագործումը նախարարություններում

Փորձնական հետազոտությունը իրականացվել է Հայաստանի հանրապետության նախարարությունների հիմնական մասում: Հետազոտության մեջ չի ներառվել միայն 1 նախարարություն: Այսպիսով, նախարարությունների հետազոտության արդյունքները կարող են համարվել ներկայացուցչական նախարարությունների համար:

S2S օգտագործման փորձնական հետազոտության արդյունքներով 2012թ. հունվարին Հայաստանի հանրապետության հետազոտված բոլոր 17 նախարարություններում օգտագործվել են անհատական, դյուրակիր (օրինակ՝ լափթոփ, նոթբուք, նեթթոփ), անհատական թվային և օժանդակիչ (PDA) համակարգիչներ: Ինչ վերաբերում է աշխատողների կողմից համակարգիչների օգտագործմանը, ապա այն կազմել է 89% :


Ներքին համակարգչային ցանց՝ օրինակ, LAN տեղական ցանց՝ մեկ շենքում կամ իրար մոտ շենքերում գտնվող ցանց համակարգիչների հաղորդակցման համար և ինտրանետ՝ ներքին հաղորդակցման ցանց, ունեցել են նախարարությունների 94%-ը:

Էլեկտրոնային եղանակով անհատական մարդկային ռեսուրսների ծառայություններին՝ օրինակ, աշխատաժամերի գրանցման համակարգը, արձակուրդի դիմումը, վճարման թերթիկների դիտման կամ բեռնավորման հնարավորությունը և այլն, աշխատողների մատչելիություն ապահոված (ունեցող) նախարարությունների բաժինը 2012թ. հունվարին կազմել է 59% (տես գծապատկեր 12):

### Գծապատկեր 12

Համակարգիչների և համակարգչային ցանցերի օգտագործումը նախարարություններում 2012թ. հունվարին

%-ով ընդամենի նկատմամբ




2012թ. հունվարին բոլոր նախարարություններն ունեցել են ինտերնետ կապ: Ինտերնետ կապի հասանելիություն ունեցող աշխատողների մասնաբաժինը աշխատողների միջին տարեկան թվաքանակում

կազմել է՝ 76 %-ը: Ընդ որում, նախարարությունների 88%-ը 2012թ. հունվարին հիմնականում ունեցել են այլ ֆիքսված ինտերնետ կապ (օրինակ, մալուխ, օպտիկամանրաթելային, վարձակալված գիծ (օրինակ, E1 կամ E3 1 մակարդակի և ATM 2 մակարդակի), Frame Relay, Metro-Ethernet, PLC - Powerline հաղորդակցում և այլն, ֆիքսված անլար կապ) (տես գծապատկեր 13):

**Գծապատկեր 13**

**Ինտերնետ հասանելիություն ունեցող նախարարությունների բաշխվածությունն ըստ ինտերնետ կապի տեսակների 2012թ. հունվարին**

%-ով ընդամենի նկատմամբ




Նախարարությունների 71%-ի կողմից ինտերնետի ամենաարագ ներբեռնման արագությունը նշվել է 2.1 Մբ/վ-10.0 Մբ/վ միջակայքը (տես գծապատկեր 14):

**Գծապատկեր 14**

**Ինտերնետ հասանելիություն ունեցող նախարարությունների բաշխվածությունն ըստ օգտագործած ինտերնետ կապի ամենաարագ ներբեռնման արագության 2012թ. հունվարին**

%-ով ընդամենի նկատմամբ




2012թ. հունվարին նախարարությունների կողմից հանրային ծառայությունների 94 %-ը տրամադրվել է ուղղակի կապի (այցելություն), ավանդական փոստի և կայք էջի միջոցով: Ինտերնետ հեռախոսակապով տրամադրվող ծառայությունների տեսակարար կշիռն ամենացածրն է՝ 18 տոկոս (տես գծապատկեր 15):

Գծապատկեր 15

Նախարարությունների կողմից հանրային ծառայությունների տրամադրման տեսակները 2012թ. հունվարին

%-ով ընդամենի նկատմամբ



2012թ. հունվարին հետազոտված բոլոր նախարարություններն ունեցել են կայք էջ: Ընդ որում, բոլորի կայք էջում հասանելի են եղել այնպիսի տեղեկատվություններ, ինչպիսիք են՝ «Հաստատության կառուցվածքը և պայմանագրերը», «Հաստատության գործունեության մասին տեղեկատվությունը», «Հաստատության գործունեության մասին համապատասխան նորությունները»: Ինչ վերաբերում է տվյալ նախարարության կողմից «Ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվության» հասանելիությանը, ապա այն բնութագրական է նախարարությունների 87%-ին: :

Նախարարությունների 71%-ը 2012թ. հունվարին ցանկացած հաղորդագրության մեջ օգտագործել է էլեկտրոնային ստորագրություն՝ օգտագործելով գաղտնի կոդերի մեթոդները, հավաստիացնելով հաղորդագրության իսկությունը և ամբողջականությունը՝ եզակիորեն փոխկապակցված և ստորագրողին նույնականացնելու հնարավորությամբ:



## **5. Փորձնական հետազոտություններից անցում կանոնավոր հետազոտության**

Հայաստանում ՏՀՏ-ի օգտագործման կանոնավոր հետազոտությունների նպատակն է արտադրել ԵՄ չափանիշներին համապատասխան վիճակագրություն կազմակերպություններում ՏՀՏ-ի օգտագործման վերաբերյալ համաձայն ԵՄ N 808/2004 կանոնակարգի (ինչպես նաև 1006/2009 կանոնակարգի, որը լրացնում է 808/2004 կանոնակարգը) և որպես հնարավոր լրացում ազգային շահերի համար կազմել վիճակագրություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՏՀՏ-ի օգտագործման վերաբերյալ, չնայած սա ամրագրված չէ ԵՄ կանոնակարգի մեջ:

ՏՀՏ վիճակագրությունը շատ դինամիկ է, և հարցաթերթիկում նշված հարցերը կարող են տարբեր տարիների ընթացքում փոփոխության ենթարկվել վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի և այդ ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների համաձայն:

### **5.1 Վիճակագրական արտադրանք**

Վիճակագրական արտադրանքը ունի արտադրվող վիճակագրական տեղեկատվության հստակ նկարագրություն: Վիճակագրական չափումները օգտագործվում են որոշակի խմբերում բոլոր վիճակագրական միավորների համար որոշակի փոփոխականների արժեքների ամփոփման համար: Նմանատիպ չափումների համար կարող են օգտագործվել ագրեգատների ձևաչափը (օր՝ “ԱՅՈ” պատասխանի ընդհանուր քանակը որոշակի հարցերի դեպքում) կամ ցուցանիշներ (օր՝ “ԱՅՈ” պատասխանների տոկոսը):

Ագրեգացումը հնարավոր է կազմել ողջ համակցության կամ նախապատմությանը առնչվող փոփոխականների կողմից սահմանվող տարբեր ենթահամակցությունների համար (օր՝ ՏԳՏԴ կատեգորիա, կամ աշխատողների թվաքանակով որոշվող խմբեր) կամ այլ ուսումնասիրության փոփոխականների պատասխաններով սահմանված ենթահամակցությունների համար (օր՝ լայնաշերտ կապի օգտագործողներ և ոչ լայնաշերտ կապի օգտագործողներ): Ցուցանիշները ստանալու համար (համամասնությունը, տոկոսները, հարաբերակցությունը և այլն) ագրեգատները պետք է բաժանվեն համապատասխան ընդհանուր համակցության կամ ենթահամակցության:

Վիճակագրական արտադրանքի կարիքները գնահատվում են բիզնեսի և սոցիալական կարիքներին համաձայն:

### **5.2 Հետազոտության ծածկույթը և դասակարգումը**

Հայաստանի կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման հետազոտության ընդգրկվածությունը (ծածկույթը) կարող է համապատասխանել ԵՄ Անդամ Պետությունների հետազոտություններին՝ ներառյալ նվազագույնը տասը աշխատող ունեցող կազմակերպությունների համար: Ապագա հետազոտություններում անհրաժեշտության դեպքում ՀՀ ԱՎԾ-ն կարող է ընդարձակել ծածկույթը (օր՝ հետազոտության շրջանակում ներառել 10 –ից քիչ աշխատող ունեցող կազմակերպությունները):

Առաջարկվում է հետևել տնտեսական գործունեությունների միջազգային դասակարգմանը (ՏՀՏԴ խմբ.2) և կատարել կազմակերպությունների խմբավորումը միջազգային փորձին համաձայն, ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՏՀՏ օգտագործման հետազոտությունը կարող է ներառել տարատեսակ հաստատություններ՝ կառավարություն, նախարարություններ, թաղապետարաններ և այլն: Սահմանափակ ռեսուրսների առկայության դեպքում հետազոտությունը կարելի է չիրականացնել ամեն տարի կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ՏՀՏ-ի օգտագործման տարեկան հետազոտությունը կարող է կենտրոնանալ տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում:

### **5.3 Տվյալների հավաքագրման մեթոդը**

Կարևոր է հավասարակշռել սպառողների կարիքները հասանելի ռեսուրսների և ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության հետ: Ռեսուրսների անհրաժեշտությունը, մասնավորապես, կարևորվում է տվյալների հավաքագրման մեթոդի ընտրության և ընտրանքի չափի համար: Այսպիսով, ՀՀ ԱՎԾ պետք է հավասարակշռի հասանելի ռեսուրսները սպառողների կողմից պահանջարկ ունեցող տեղեկատվության հետ՝ ներառյալ արդյունքների մանրամասն մակարդակը և ցանկալի որակը: Միջազգային մեթոդաբանության և չափանիշներին համապատասխան տվյալների հավաքագրման համար հնարավոր է կիրառել ներքոբերյալ մեթոդները՝

- Տվյալների հավաքագրում հարցազրուցավարների կողմից
- Տվյալների հավաքագրում փոստի միջոցով հարցաթերթիկի ներկայացմամբ
- Տվյալների հավաքագրում էլ-փոստի միջոցով

### **5.4 Հետազոտության հարցաթերթերը**

Հետազոտության հարցաթերթերը պետք է ունենան պարզ և տրամաբանական կառուցվածք: Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար անհրաժեշտ է օգտագործել ֆիլտր հարցեր, որոնք պետք է ուղեկցվեն հրահանգներով: Փոստի միջոցով հարցաթերթի ներկայացման դեպքում հրահանգները պետք է ուղղված լինեն կազմակերպություններին, մինչդեռ հարցազրուցավարների միջոցով հետազոտության իրականացման դեպքում, դրանք կվերաբերեն հարցազրուցավարներին և պետք է պարունակեն պարզ սահմանումներ և բացատրություններ օր.՝ տեխնոլոգիական տերմինաբանություն:

## 5.5 Շերտավորումը և ընտրանքի չափը

